Անդրե Մորուա

Ընդմիջված չվերթ

– Ուզում եք լսել կյանքիս ամենաարտառոց պատմությո՞ւնը, -ասաց նա,- դժվարանում եմ ասել: Կյանքումս նմանատիպ պատմություններ շատ են եղել:

– Շատերը դեռևս չեն ավարտվել:
– Ի՞նչ եք ասում, արդեն ծերանում եմ, իմաստնանում: Այլ կերպ ասած հանգստանալու կարիք ունեմ: Այժմ երջանիկ եմ ինձ զգում, երբ երեկոյան մնում եմ մենակ՝ վերընթերցելով հին նամակներ կամ ձայնասկավառակներ լսելով:
– Անհնար է, որ Ձեզ այլևս չսիրահետեն: Դուք պահպանել եք երբեմնի նրբագեղությունը, և չեմ կարող ասել, թե ինչպիսի փորձը կամ միգուցե անցած հույզերի տառապանքներն անմեկնելի խորհուրդ են հաղորդում Ձեր դիմագծերին: Պարզապես անդիմադրելի է:
– Շատ սիրալիր եք: Այո, դեռևս երկրպագուներ ունեմ: Դժբախտությունն այն է, որ կորցրել եմ հավատս: Ավաղ, ես այնքան լավ եմ ճանաչում տղամարդկանց. նրանց բուռն կիրքը, քանի դեռ ոչնչի չեն հասել, այնուհետև անտարբերությունը կամ անիմաստ խանդը: Ինքս ինձ հարց եմ տալիս. ինչու՞ ևս մեկ անգամ դիտեմ մի կատակերգություն, որի հանգուցալուծումն արդեն իսկ գուշակում եմ: Երիտասարդ տարիներիս ամեն ինչ այլ էր: Ամեն անգամ ինձ թվում էր, որ հրաշքով հանդիպել եմ նրան, ով ինձ վերջապես կազատեր անորոշությունից: Յուրաքանչյուր անգամ ես ամբողջովին տրվում էի զգացմունքներիս: Ընդամենը հինգ տարի է անցել, ինչ հանդիպեցի Ռենոյին, երբ ինչ-որ թարմության տպավորություն համակեց ինձ : Նա ուժեղ էր, գրեթե կոպիտ: Նա ազատագրեց ինձ կասկածներիցս, իսկ իմ անհանգստություններն ու երկմտանքները նրան պարզապես ծիծաղելի էին թվում: Ինձ թվում էր՝ փրկչիս եմ գտել: Բնավ ոչ այն բանի համար, որ կատարյալ էր. ոչ բարեկիրթ էր, ոչ էլ հղկված շարժուձև ուներ: Սակայն նա ինձ տալիս էր այն, ինչ երբեք չեմ ունեցել՝ ամրություն: Հասկանու՞մ եք, նա ինձ համար փրկության օղակ էր: Համենայն դեպս այդժամ այդպես էի կարծում:

– Այլևս այդպես չե՞ք մտածում:
– Դուք շատ լավ գիտեք, որ ոչ: Ռենոն սարսափելի պարտություններ կրեց, ստիպված եղա նրան մխիթարել, հանգստություն և ուժ ներշնչել. պաշտպանեցի մի մարդու, ով ժամանակին ինձ ուժ էր հաղորդել: Իրապես ուժեղ տղամարդիկ հազվադեպ են պատահում:
– Դուք գոնե այդպիսի մեկին ճանաչե՞լ եք:
– Այո, մեկին, ոչ երկար ժամանակ և զարմանալի հանգամանքներում: Ուզում էիք լսել կյանքիս ամենաարտառոց արկածի մասի՞ն, ահա այն:
– Պատմեք խնդրում եմ:
– Տեր իմ Աստված, այս ի՞նչ եք խնդրում: Ստիպված եմ լինելու փորփրել հիշողություններս:Բացի այդ շատ երկար պատմություն է, իսկ Դուք կարծես շտապում եք: Մի քիչ ժամանակ կարո՞ղ եք հատկացնել:
-Իհարկե, լսում եմ Ձեզ:
-Թող Ձեր ասածով լինի: Քսան տարի առաջ էր: Չափազանց երիտասարդ այրի էի: Հիշու՞մ եք առաջին ամուսնությունս: Ես ամուսնացել էի, ծնողներիս հաճոյանալու համար, ինձնից տարիքով շատ մեծ մի մարդու հետ, որի հանդեպ ջերմությամբ էի լցված, բայց դա որդիական ջերմություն էր: Նրան սիրելն ինձ համար երախտիքից դրդված պարտականություն էր, բայց ոչ հաճույք: Նա մահացավ երեք տարի անց: Ես ապրում էի հարաբերական բարեկեցիկ կյանքով այնպես, որ ընտանեկան և ամուսնական խնամակալությունից ձերբազատված՝ ինձ հանկարծ զգացի միանգամայն ազատ և ճակատագրիս տերն ու տիրակալը: Կարող եմ ասել առանց սնապարծության, որ այդ տարիներին բավական գեղեցիկ էի:
– Ավելի քան գեղեցիկ:
– Լավ, եթե պնդում եք… Ամեն դեպքում տղամարդկանց դուր էի գալիս, և շատ շուտով երկրպագուների բանակ հավաքվեց շուրջս: Իմ ընտրյալը երիտասարդ ամերիկացի Ջեկ Պարկերն էր: Բազմաթիվ ֆրանսիացիներ, որ իրենց համարում էին իր մրցակիցները, ինձ ավելի էին դուր գալիս: Մեր ճաշակները միանգամայն համընկնում էին, նրանք կարողանում էին ինձ հաճոյախոսել: Իսկ Ջեկը չէր սիրում կարդալ, սիրում էր միայն բյուզ և ջազ լսել, ինչ վերաբերում է նկարչությանը՝ միամտաբար վստահում էր ժամանակի բոլոր հեղինակավոր կարծիքներին: Սիրո մասին չէր կարողանում խոսել, ավելի ճիշտ ընդհանրապես այդ մասին չէր խոսում: Նրա սիրահետումը

սահմանափակվում էր կինոյում, թատրոնում կամ այգում իր ափերի մեջ ձեռքս բռնելով լուսնյակ գիշերին և շշնջալով “You are just wonderful”: Պետք է որ նա ինձ համար ձանձրալի լիներ: Բնավ ոչ՝, ես հաճույքով էի հանդիպում նրան: Նա ինձ թվում էր անկեղծ և հավասարակշռված: Ինձ այնպիսի ապահովության զգացողություն էր ներշնչում, ինչպիսին՝ ավելի ուշ ներկայիս ամուսինն ամուսնության ատաջին տարիներին: Մյուս ընկերներս որոշակիորեն չգիտեին՝ ինչի էին ձգտում: Նրանք արդյոք ցանկանում էին լինել ամուսին, թե սիրեկան, չգիտեմ. երբեք պարզ չէին արտահայտվում:
Ջեկի հետ ոչ մի նման բան չկար: Ավելի լուրջ հարաբերությունների գաղափարը նրան սարսափեցնում էր: Նա ցանկանում էր ամուսնանալ ինձ հետ, տանել ինձ Ամերիկա, որտեղ ես նրան կպարգևեի գեղեցիկ բալիկներ՝ նրա նման գանգրահեր, փոքրիկ ուղիղ քթիկով, դանդաղ, քթի մեջ խոսող ու իր պես միամիտ: Նա բանկի փոխնախագահ էր, միգուցե մի գեղեցիկ օր կարողանար նախագահի պաշտոնը զբաղեցնել: Ամեն դեպքում կապրեինք բարեկեցիկ կյանքով և անգամ հիասքանչ ավտոմեքենա կունենայինք: Հենց դա էր նրա համար երջանկությունը:
Խոստովանեմ, որ ամենևին էլ դեմ չէի: Դա Ձեզ զարմացնու՞մ է: Այնուամենայնիվ իմ բնույթն է այդպիսին: Ես ինքս բավական բարդ եմ և պարզ մարդիկ ինձ գրավում են: Շատ վատ հարաբերությունների մեջ էի ընտանիքիս հետ: ԱՄՆ-ում ապրելը փախուստի միջոց էր: Ջեկը, Փարիզի մասնաճյուղում մի քանի ամիս փորձառություն անցնելուց հետո, վերադարձել էր Նյու-Յորք: Երբ նա մեկնել էր, խոստացել էի գնալ Նյու-Յորք և ամուսնանալ նրա հետ: Մի՝ մոռացեք, որ ես նրա սիրուհին չէի եղել: Դա իմ պատճառով չէր. ես կզիջեի, եթե նա ինձ այդ մասին խնդրեր: Սակայն նա երբևիցե իրեն թույլ չէր տա: Ջեկն ամերիկացի կաթոլիկ էր, խստաբարո և ցանկանում էր պարկեշտորեն ամուսնանալ Saint-Patrick-ում՝ Fifth Avenue-ում, ծաղկով զարդարված հարսանեկան բաճկոն կրող հարսնեղբայրներով և շղարշե զգեստով հարսնաքույրերով շրջապատված: Այդ ամենն ինձ էլ էր դուր գալիս:
Պայմանավորվել էինք, որ ես կժամանեի ապրիլին: Ջեկը պետք է ինձ համար ինքնաթիռի տոմս ամրագրեր: Ես ասես բնազդաբար ցանկացա Էյր Ֆրանս – ով մեկնել, և դա ինձ այն աստիճան բնական թվաց, որ նույնիսկ մտքովս չանցկացրի նրան որևէ բան ասել այդ մասին:
Վերջին պահին մի տոմս ստացա Փարիզ-Լոնդոն, Լոնդոն-Նյու-Յորք ուղղությամբ:

Տոմսը տրամադրել էր մի ամերիկյան ավիաուղղի, որն այդ ժամանակ իրավունք չուներ վայրէջք կատարել մեզ մոտ: Դա ինձ փոքր-ինչ անհանգստացրեց, սակայն ես, ինչպես գիտեք, հարմարվող բնավորություն ունեմ և այլ քայլեր ձեռնարկելու փոխարեն ընդունեցի իրավիճակը: Պետք է Լոնդոն հասնեի երեկոյան ժամը յոթին, ընթրեի օդակայանում և իննին մեկնեի Նյու-Յորք: Ես, ինքս էլ չգիտեմ ինչու, անբացատրելի սեր ունեմ առ օդակայաններ, իսկ Դու՞ք: Ավելի մաքուր և ժամանակակից են, քան երկաթուղային կայարանները: Զարդարված են «վիրահատարանների» ոճով: Անձանոթ և դժվարընկալելի ձայներ, որովհետև աղավաղված են, բաձրախոսով հրավիրում են ուղևորներին ճանապարհորդել արևադարձային և հեռավոր քաղաքներ: Ապակիների ետևից երևում է, թե ինչպես են վայրէջք կատարում և մեկնում հսկայական ինքնաթիռները: Թատրոնի անիրական դեկոր է, որ բնավ զուրկ չէ գեղեցկությունից:

Ես ավարտել էի ընթրիքս և հանգիստ նստած էի կաշվե անգլիական կանաչավուն բազկաթոռում, երբ բարձրախոսը արտաբերեց երկար նախադասություն, որ ամբողջովին չլսեցի, սակայն ըմբռնեցի Նյու-Յորք բառը և թռիչքիս համարը: Փոքր-ինչ անհանգստացած՝ շուրջս նայեցի: Ուղևորները վեր էին կենում: Կողքիս բազկաթոռին նկատել էի հետաքրքիր դիմագծերով մոտ քառասունամյա մի տղամարդու: Նրբագեղ, խառնիխուռն մազերով, բաց պարանոցով, նա հիշեցնում էր անգլիացի ռոմանտիկ բանաստեղծների և մասնավորապես Շելլիին: Նրան նայելով մտածեցի. «Կամ գրող է, կամ երաժիշտ», և ինձ մոտ ցանկություն առաջացավ ինքնաթիռում նրա կողքին նստել: Նա նկատեց իմ հանկարծակի շփոթմունքը և անգլերենով հարցրեց.

– Ներողություն Տիկին, Դուք 632 թռիչքո՞վ պետք է մեկնեիք:

– Այո, ի՞նչ հայտնեցին:

– Տեխնիկական միջադեպ է տեղի ունեցել, ինքնաթիռը կմեկնի միայն առավոտյան ժամը վեցին: Այն ուղևորների համար, ովքեր կցանկանան մնալ հյուրանոցում, ընկերությունը ավտոբուս կտրամադրի մի քանի րոպեից:

– Այ քեզ անհաջողություն: Հյուրանոց գնալ՝ առավոտյան ժամը հինգին արթնանալու համար: Սարսափելի է: Դուք ի՞նչ եք անելու:

– Օ՛, Տիկին, իմ բախտը բերեց. մի ընկեր ունեմ, որ աշխատում և ժամանակավորապես բնակվում է այստեղ՝ օդակայանում: Ավտոմեքենաս նրա ավտոտնակում եմ թողել: Գնամ վերցնեմ և վերադառնամ տուն:

Մեկ րոպե հետո ավելացրեց.
– Կամ ավելի լավ է օգտվեմ այս ժամանակահատվածից՝ պտույտ կատարելու համար: Ես երգեհոնի վարպետ եմ և պետք է ժամանակ առ ժամանակ ստուգեմ, թե ինչ վիճակում են գործիքներս Լոնդոնի բազմաթիվ եկեղեցիներում: Ահա, սա ինձ համար անսպասելի առիթ է դրանցից երկուսը կամ երեքը ստուգելու համար:
– Գիշերը Դուք կարո՞ղ եք եկեղեցի մտնել:
Նա ծիծաղեց և գրպանից բանալիների մի խուրձ հանեց.
– Այո, հատկապես գիշերն եմ փորձում ստեղնաշարը և փուքսերը՝ որևէ մեկին չխանգարելու համար:
– Իսկ նվագել գիտե՞ք:
– Քիչ թե շատ:
– Պետք է որ երգեհոնային համերգները գեղեցիկ լինեն միայնության և մթության մեջ:
– Գեղեցի՞կ: Չեմ կարող ասել: Չնայած որ սիրում եմ հոգևոր երաժշտությունը, մեծ երգեհոնահար չեմ: Սակայն մի բան հաստատ է. դա ինձ անսահման հաճույք է պատճառում:
Մի պահ տատանվելով՝ ավելացրեց.
-Լսեք, Տիկին, ես Ձեզ արտառոց մի առաջարկ ունեմ: Դուք ինձ չեք ճանաչում և վստահություն պահանջելու հիմքեր չունեմ: Սակայն եթե ցանկանայիք ինձ ուղեկցել, ես Ձեզ ինձ հետ կտանեի և հետո ետ կբերեի: Դուք հավանաբար երաժիշտ եք:
-Այո, որտեղի՞ց իմացաք:
-Դուք կարծես արտիստի երազների ծնունդը լինեք: Դա խաբուսիկ չի կարող լինել: Խոստովանեմ, որ հաճոյախոսությունն ինձ հուզեց: Ի զարմանս ինձ՝ ես այդ մարդուն հնազանդվում էի: Գիտեի, որ Լոնդոնը կտրել-անցնելն ինչ-որ անծանոթի հետ, այն էլ գիշերվա կեսին, անզգույշ քայլ էր: Կանխատեսում էի հնարավոր վտանգները: Նույնիսկ մտքովս չանցավ մերժել:
– Գնացինք,- ասացի ես: Ի՞նչ անեմ այս պայուսակի հետ:
– Մենք այն իմ պայուսակի հետ կթողնենք ավտոտնակում:
Ի վիճակի չեմ ասել, թե որոնք էին մեր այցելած երեք եկեղեցիներն այդ գիշեր և թե ինչ նվագեց իմ առեղծվածային ուղեկիցը: Հիշում եմ պարուրաձև աստիճանները, որ բարձրացա նրա օգնությամբ, ապակիներից ներթափանցող լուսնի ճառագայթները և երկնային երաժշտությունը:

Լսեցի Բախի, Ֆորեի, Հենդելի երաժշտությունը, սակայն կարծում եմ ուղեկիցս ավելի հաճախ հանպատրաստից ստեղծագործում էր:
Այդժամ ապշեցուցիչ էր: Նման էր տառապյալ հոգու կրքոտ խոստովանության: Այնուհետև երկնային հնչյուններ և քաղցրահունչ մեղեդիներ: Միանգամայն արբեցած էի: Հարցրի, թե ով էր այդ մեծ երաժիշտը: Նրա անունը Պետեր Դուն էր:
– Հավանաբար Դուք ճանաչված եք,-ասացի ես,-հանճարեղ եք:
– Այդպես մի կարծեք: Գիշերվա ժամերն են պատրանք հաղորդում: Ես միջակ կատարող եմ: Սակայն հավատն ինձ համար ներշնչանքի աղբյուր է, իսկ այս գիշեր՝ Ձեր ներկայությունը:
Նման խոստովանությունը ինձ չզարմացրեց. Պետեր Դունն այն մարդկանց թվին էր պատկանում, ում հետ մի քանի րոպե տևող զրույցն էլ բավական է զարմանահրաշ մտերմության հաստատելու համար: Ասես այս աշխարհից չլիներ: Երեք եկեղեցիներ այցելելուց հետո նա պարզապես ասաց.
– Գրեթե կեսգիշեր է: Կցանկանայի՞ք իմ տանն անցկացնել մնացած երեք կամ չորս ժամերը: Ես Ձեզ համար ձվածեղ կպատրաստեմ: Մի քիչ էլ միրգ կա: Սպասուհին պետք է վաղն առավոտյան տանի այդ ամենը:
Ես երջանիկ էի, և քանի որ Ձեզ ամեն ինչ պատմում եմ, խոստովանեմ, որ թաքուն հույս ունեի, թե այդ երեկոն սիրո պատմության սկիզբն էր դառնալու: Կնոջ սերը շատ ավելի հաճախ է ծնվում հիացմունքից: Այդ երկնային երաժշտությունը, երգեցողությամբ լեցուն գիշերը, քնքուշ, բայց և միաժամանակ ուժեղ ձեռքերը, որ ինձ համար ուղի էին հարթում կիսախավարի մեջ, իրարամերժ ցանկություններ էին առաջացրել: Թե ուղեկիցս ցանկանար, ամբողջովին նրանը կլինեի: Այդպիսին եմ ես:
Նրա փոքրիկ և ճեփ-ճերմակ պատերով, գրքերով լեցուն բնակարանը, ուր նշամարվում էր սև եզրագիծ, ինձ դուր եկավ: Ես ինձ միանգամայն իմ տանն էի զգում: Հանեցի գլխարկս և ճանապարհորդական վերարկուս: Նրան առաջարկեցի մեր ընթրիքն իր փոքրիկ խոհանոցում պատրաստելու օգնությունս:
Նա մերժեց.
– Ոչ, սովորությանս համաձայն՝ ինքս կպատրաստեմ: Որևէ գիրք վերցրեք:
Կվերադառնամ մի քանի րոպեից:
Ընտրեցի Շեքսպիրի սոնետները և հասցրի դրանցից երեքը ընթերցել, որոնք հիանալիորեն համապատասխանում էին հոգեվիճակիս: Այնուհետև Պետերը

վերադարձավ, փոքրիկ սեղան դրեց իմ առջև և մատուցեց ընթրիքը.
-Ի՛նչ համեղ է,- ասացի ես, – սկական վայելք է, չափազանց քաղցած էի: Զարմանալի մարդ եք: Դուք ամեն ինչ լավ եք կարողանում անել: Երջանիկ է այն կինը, ով Ձեր կողքին է:
-Իմ կողքին ոչ ոք չկա: Սակայն ավելի շատ կուզենայի Ձեր մասին լսել: Ակնհայտ է՝ ֆրանսուհի եք: Ամերիկա՞ եք մեկնում:
– Այո, ամուսնանալու եմ մի ամերիկացու հետ:
Նա ոչ անակնկալի եկավ, ոչ էլ դժգոհություն ցուցաբերեց.
-Դուք նրան սիրու՞մ եք:
-Ես պետք է նրան սիրեմ, քանի որ որոշել եմ՝ կյանքիս մշտական ուղեկիցն է լինելու:
-Սա լուրջ պատճառ չի կարող լինել -ասաց նա,- կան ամուսնություններ, դեպի որոնց մղվում ենք ինքնաբերաբար, դանդաղ և աննկատ կերպով, առանց իրական ցանկության: Հանկարծ հայտնվում ենք պարտավորության առջև: Այլևս ետ քաշվելու քաջություն չենք ունենում և արժանանում ձախսողված ճակատագրի: Նման հոռետեսության իրավունք չունեմ, քանի որ դեռ ոչինչ չգիտեմ Ձեր ընտրյալի մասին: Քիչ հավանականություն կա, որ Ձեզ նման կինը սխալվի: Միակ բանը, որ ինձ զարմացնում է…
Նա կանգ առավ.
-Ասացեք, մի մտածեք, թե կվախենամ: Ես իրատես եմ… ընդունակ եմ կողքից գնահատելու սեփական արարքներս:
-Լավ,- շարունակեց նա,- միակ բանը, որ ինձ զարմացնում է, ոչ թե այն է, որ մի ամերիկացի կարող է Ձեզ դուր գալ (նրանց մեջ հանդիպում են բացառիկ, և անգամ համակրելի մարդիկ), այլ այն, որ Դուք ցանկություն եք ունեցել նրա երկրում ապրել Ձեր ողջ կյանքը: Դուք այնտեղ հիրավի «նոր աշխարհ » կբացահայտեք, որի արժեքները չեն համապատասխանում Ձեր արժեքներին: Միգուցե դա անգլիացու կանխակալ կարծիքն է: Միգուցե Ձեր փեսացուն ինքնին այնքան կատարյալ է, որ Դուք ամենևին ուշադրություն չեք դարձնի Ձեր ամուսնական զույգին շրջապատող հասարակությանը: Մի պահ խորհեցի: Չգիտեմ՝ ինչու ինձ թվում էր, որ Պետեր Դունին ասված իմ խոսքերը մեծ կարևորություն ունեին, և մտքիս նվազագույն երանգներն իսկ պարտավորված էի զգում նրան բացատրել:
-Այդպես մի կարծեք,- ասացի ես:

Ջեկը (ապագա ամուսինս) կատարյալ մարդ չէ, և վստահ եմ՝ չի կարողանա ինքն իրենով ինձ համար հաճելի շրջապատի բացը լրացնել: Համակրելի երիտասարդ է, շատ ազնիվ, այդ տեսակետից լավ ամուսին կլինի, երբևէ չի դավաճանի և առողջ բալիկներ կպարգևի:

Եվ այնուամենայնիվ, երեխաներից, իր գործերից, քաղաքականությունից մեր ընկերներին վերաբերող պատմություններից բացի, ընդհանուր զրույցի թեմա գրեթե չենք ունենա: Ինձ ճիշտ հասկացեք: Ջեկը խելացի չէ: Նա շրջահայաց է և գործունյա, տեսնում է գեղեցիկը և լավ ճաշակ ունի: Միայն թե բանաստեղծությունները, նկարները, երաժշտությունը նրա համար մեծ նշանակություն չունեն: Այդ տեսակ բաների մասին երբեք չի մտածում: Ի՛նչ հոգ: Վերջ ի վերջո արվեստը մարդկային գործունեության ընդամենը մեկ տեսակն է:

-Անկասկած,- ասաց Պետեր Դունը, – կարելի է լինել շատ զգայուն մարդ՝ առանց արվեստը սիրելու կամ ավելի ճիշտ առանց այն հասկանալու: Ես նույնիսկ նախընտրում եմ անկեղծ անտարբերությունը աղմկոտ և արտահայտված սնոբիզմին: Սակայն Ձեզ նման կնոջ ամուսինը լինելու համար…Օժտվա՞ծ է արդյոք այն անհրաժեշտ նրբանկատությամբ, որը նրան թույլ կտա գուշակել կողակցի գաղտնի հույզերը:

-Նա դրան չի էլ ձգտում: Ես նրան պարզապես դուր եմ գալիս: Նա էլ չգիտի՝ ինչու. ինքն իրեն այդ հարցը չի տալիս: Համոզված է, որ ես իր կողքին երջանիկ կլինեմ: Չէ՞ որ ես կունենամ աշխատող ամուսին, բնակարան Park Avenue-ում, բարձրակարգ ավտոմեքենա և հիանալի սևամորթ սպասավորներ՝ իր մոր կողմից ընտրված, որը ծնունդով Վիրջինիա նահանգից է: Էլ ի՞նչ ավել բան կարող է ցանկանալ կինը:

– Մի հեգնեք,- ասաց նա,- սարկազմն անհանգիստ խղճի մասին է վկայում: Երբ հեգնում եք Ձեր սիրելի էակին, դրանով իսկ սպանում եք Ձեր զգացմունքները: Իհարկե, դա շատ կարևոր է: Փրկության միակ միջոցը գթասիրտ և քնքուշ լինելն է տղամարդկանց հանդեպ: Գրեթե բոլորն այնքա՛ն դժբախտ են:

– Չեմ կարծում, որ Ջեկը դժբախտներից է: Նա իսկական ամերիկացի է՝ հիանալիորեն հարմարված այն հասարակությանը, որն իրենն է և որն իր անկեղծ կարծիքով լավագույնն է աշխարհում : Ի՞նչը կարող է նրան կասկածի տեղիք տալ:

-Կարծում եմ՝ Դուք: Ձեր շնորհիվ կիմանա, թե ինչ բան է տառապանքը: Չգիտեմ՝ կարողացա Ձեզ նկարագրել այդ գիշերվա հոգեվիճակս, որն ինձ

տրամադրում էր ամեն ինչին համաձայնել: Բավական արտառոց էր այն փաստը, որ գիշերվա ժամը մեկին միայնակ գտնվում էի մի ինչ-որ անգլիացու բնակարանում, որին հանդիպել էի մի քանի ժամ առաջ օդակայանում: Էլ ավելի զարմանալի էր, որ նրան վստահել էի անձնական կյանքիս գաղտնիքներ և ապագայի ծրագրեր: Եվ, վերջապես, ապշեցուցիչ էր, որ նա ինձ խորհուրդներ էր տալիս, իսկ ես ընդունում էի դրանք մի տեսակ ակնածանքով: Բայց դա այդպես էր: Պետերրն ուներ բարություն և արժանապատվություն, որոնց շնորհիվ իրավիճակը շատ բնական էր դառնում: Եվ ոչ թե որովհետև մարգարեի էր նման, բնավ ոչ: Նա այն տղամարդկանցից էր, որոնք ձևականությունների ետևից չեն ընկնում: Լիաթոք ծիծաղում էր, երբ զվարճալի որևէ բան էի ասում: Սակայն նրա խոսքերում խորաթափանց անկեղծություն էր զգացվում, որն ամենահազվագյուտ բանն է աշխարհում: Այո, մի խորաթափանց անկեղծություն… Հասկանու՞մ եք, մարդկանց մեծամասնությունը չեն ասում այն, ինչ մտածում են: Իրենց բոլոր նախադասություններում միշտ հետին միտք կա: Արտահայտած միտքն էլ միշտ քողարկում է մեկ այլ միտք, որ ցանկանում են գաղտնի պահել: Կամ ասում են ինչ պատահի՝ առանց մտածելու: Պետերն իրեն պահում էր Տոլստոյի որոշ հերոսների նման: Նա խելացի էր և ուղղամիտ: Դա ինձ այն աստիճան զարմացրեց, որ հարցրցի.

-Ձեր մեջ ռուսական արյու՞ն կա:

-Ինչու՞, զարմացած եմ, որ այդպիսի հարց եք տալիս: Այո, մայրս ռուս էր, հայրս՝ անգլիացի:

Ես այնքան հպարտ էի փոքրիկ բացահայտմանս համար, որ շարունակեցի նրան հարց ու փորձ անել

-Ամուսնացած չեք և չեք էլ եղե՞լ:

-Ոչ, միգուցե գոռոզամիտ թվամ: Ավելի մեծ բաների եմ ցանկանում հասնել:

-Մեծ սիրո՞:

-Մեծ սիրո, բայց ոչ կնոջ նկատմամբ: Զգում եմ՝ այս թվացյալ աշխարհի թշվառ պատրանքներից անդին ինչ-որ գեղեցիկ բան գոյություն ունի, որի համար արժե ապրել:-Եվ այդ « ինչ-որ բանը» հոգևոր երաժշտության մե՞ջ եք տեսնում:

-Այո, և բանաստեղծություններում: Ինչպես նաև Ավետարանում:

Ես կուզենայի կյանքում անբիծ ու անեղծ մի բան ստեղծել: Ներողություն եմ խնդրում, որ իմ մասին այսպես եմ արտահայտվում՝ այսքան հուզառատ և ոչ բրիտանացուն վայել, սակայն թվում է՝ ինձ այնքան լավ ու այնքան արագ եք հասկանում:

Ես վեր կացա և գնացի նստելու նրա կողքին: Ինչու՞: Անկարող եմ Ձեզ բացատրել: Այլ կերպ չէի էլ կարող վարվել:
-Այո, հասկանում եմ,- ասացի ես,- ես Ձեզ նման եմ մտածում. խենթություն է լցնել կյանքը՝ մեր միակ հարստությունը, անիմաստ րոպեներով, զուր գործերով, ճղճիմ վեճերով: Ես կուզենայի, որ բոլոր ժամերս նման լինեին Ձեզ հետ անցկացրած այս պահերին: Եվ, այնուամենայնիվ, գիտեմ, որ այդպես չի կարող լինել: Դրա համար անհրաժեշտ ուժը չունեմ: Կտրվեմ կյանքի ընթացքին, քանի որ այդպես ավելի հեշտ է: Կդառնամ Տիկին Պարկերը, գոլֆում ավելի լավ արդյունքի կհասնեմ, կանաստա կխաղամ,ձմռանը կգնամ Ֆլորիդա, և տարիներն այդպես կանցնեն մինչ մի գեղեցիկ օր կմեռնեմ: Միգուցե ասեք, որ ափոս է, և իրավացի կլինեք:Բայց ի՞նչ անել: Ես հենվեցի նրա ծնկներին: Այդ պահին իրենն էի: Տիրանալը դեռ ոչինչ չի նշանակում, սակայն համաձայնությունն ամեն ինչ է:
-Ի՞նչ անել,- ասաց նա,-պետք է կարողանալ չկորցնել ինքնատիրապետումը: Ինչու՞ տրվել գետի հոսանքին. չէ՞ որ դուք լողալ գիտեք: Ուզում եմ ասել լի եք եռանդով և մեծ հոգու տեր կին եք: Իհարկե, երկար պայքարի անհրաժեշտություն չկա ճակատագիրը սանձելու համար: Մարդու կյանքում կան հազվագյուտ պահեր, երբ ամեն ինչ որշվում է մեկընդմիշտ: Հենց այդ հազվագյուտ պահերին այո կամ ոչ ասելու համարձակություն պետք է ունենաք:
-Եվ Դուք կարծում եք, թե այս պահին պետք է ոչ ասելու համարձակություն ունենա՞մ: Նա շոյեց մազերս, այնուհետև կտրուկ ետ քաշեց ձեռքը և ասես մի պահ խորհեց.
– Դուք ինձ բավական դժվար հարց եք տալիս,-վերջապես ասաց նա,-ի՞նչ իրավունք ունեմ ես, Ձեզ, Ձեր ընտանիքը, Ձեր ապագա ամուսնուն հազիվ ճանաչելով, որևէ խորհուրդ տալ: Կարող է մեծ սխալ թույլ տամ: Ոչ թե ես, այլ Դուք պետք է պատասխանեք: Քանի որ միայն Դուք գիտեք, թե ինչ ակնկալիքներ ունեք այդ ամուսնությունից, միայն Դուք կարող եք կանխատեսել դրա հետևանքները: Միակ բանը, որ կարող եմ անել, Ձեր ուշադրությունը գրավելն է այն հարցի շուրջ, որն ըստ իս, կարծում եմ նաև Ձեր կարծիքով, ամենակարևորն է: Վստա՞հ եք, որ չեք սպանի Ձեր մեջ լավագույն երազները: Ես էլ իմ հերթին մի պահ լռեցի:

– Ավաղ, ոչ, վստահ չեմ: Իմ մեջ լավագույնն ինչ-որ ցնորքի հույսն է, զոհաբերության ծարավը:Երեխա ժամանակ երազում էի հերոսուհի կամ սուրբ դառնալ: Այժմ երազում

եմ նվիրվել հիանալի մարդու և եթե կարողանամ, օգնել նրան իր առաքելության մեջ: Ահա, այն, ինչ Ձեզ ասացի, ոչ ոքի չեմ ասել, բայց… Ինչու՞ Ձեզ պատմեցի: Ինքս ինձ հարց եմ տալիս: Ձեր մեջ ինչ-որ բան վստահություն է ներշնչում և ստիպում գնալ խոստովանանքի:

– Այդ ինչ-որ բանը,-ասաց նա,- անձնազոթյունն է: Նա, ով չի փնտրում այն, ինչ մարդիկ երջանկություն են անվանում, ընդունակ է սիրել ուրիշներին այնպես, ինչպես նրանք պետք է սիրված լինեն և դրանում է տեսնում իր երջանկությունը: Ես համարձակ և խենթ ժեստ արեցի՝ բռնելով նրա ձեռքը:

– Իսկ ինչու՞ Դուք՝ Պետեր Դուն, չունենաք իրական երջանկության Ձեր բաժինը: Ես նույնպես Ձեզ քիչ եմ ճանաչում, սակայն կարծում եմ՝ Դուք այն մարդն եք, ում անգիտակցաբար փնտրել եմ ողջ կյանքում:

– Մի հավատացեք դրան: Իրականում ես այդպիսին չեմ. դուք ինձ ուրիշ աչքերով եք տեսնում: Ոչ մի կնոջ համար չէի լինի ոչ ցանկալի ամուսին, ոչ էլ սիրեկան: Ես չափազանց ինքնամփոփ եմ: Չեմ կարող ունենալ մշտական կողակից, ով առավոտից մինչև երեկո ինձնից կպահանջեր ուշադրություն, որի իրավունքն ունի:

– Ուշադրությունը փոխադարձ կլիներ:

– Հավանաբար, սակայն ես ուշադրության կարիք չունեմ:

– Դուք Ձեզ բավական ուժեղ եք համարում՝ կյանքին միայնակ դիմագրավելու համար, այնպես չէ՞:

– Ավելի ճիշտ ինձ բավական ուժեղ եմ համարում կյանքին դիմակայելու համար, երբ կողքիս բարի կամքի տեր մարդիկ կան, որ գործեմ նրանց հետ՝ աշխարհին ավելի իմաստուն և երջանիկ դարձնելու կամ առնվազն փորձելու համար այդպես անել:

– Միգուցե ավելի հեշտ կլիներ, եթե Ձեր կողքին մի կին կողակից լիներ: Իհարկե նա պետք է կիսեր այն հավատը, որ Ձեզ ուժ է հաղորդում: Բայց եթե նա սիրեր…

– Դա բավարար նախապայման չէ: Ես բազմաթիվ սիրահարված կանանց եմ ճանաչել: Այդպիսի կինը կույրի պես հետևում է սիրած տղամարդուն: Ասես արթմնի երազում լինի: Մեկ օր արթնանում է՝ սարսափահար հայտնաբերելով, որ քայլում է տանիքի եզրով, և որ վտանգի են ենթարկվում: Այդ պահին միակ միտքը վերադառնալն է

անձկալի առօրյային: Խղճմտանք ունեցող տղամարդը հետևում է կնոջը: Այնուհետև, ինչպես ասում են, տուն-տեղ են ստեղծում: Ասես զինաթափված մարտիկ լինի:
– Դուք ցանկանում եք միայնա՞կ պայքարել: Հետո նա ինձ բարձրացրեց ոչ առանց քնքշության:
-Ինձ համար երբեք այսքան դժվար չի եղել խոստովանել, բայց դա այդպես է. ես միայնակ եմ ցանկանում պայքարել: Ես խորը հոգոց հանեցի.
-Ափսոս: Ես պատրաստ էի զոհաբերել Ջեկին:
-Լավ կլիներ զոհաբերել թե Ջեկին, թե ինձ:

-Ու՞մ համար:

-Հանուն Ձեզ:

Ես վերցրել էի գլխարկս և այն դրեցի հայելու առջև: Պետերն ինձ մեկնեց վերարկուս:
-Դուք իրավացի եք,- ասաց նա,- պետք է մեկնել: Օդակայանը շատ հեռու է այստեղից. ավելի լավ է տեղ հասնել, քանի դեռ ավտոբուսի ճանապարհորդները չեն ժամանել: Նա գնաց խոհանոց՝ լույսը հանգցնելու: Մինչ դուրս կգայինք, նա ինձ եղբոր նման գրկախառնվեց մի շարժումով, որին անկարող էր դիմակայել: Ես դիմադրություն ցույց չտվեցի: Տրվել էի մի ուժի, որին հաճելի էր հնազանդվել: Սակայն նա շուտով ձեռքերը բաց թողեց, բացեց դուռը և ճանապարհ տվեց: Փողոցում մենք գտանք իր փոքրիկ ավտոմեքենան, և ես նստեցի նրա կողքին՝ առանց բառ անգամ արտասանելու: Անձրևում էր, իսկ գիշերային Լոնդոնի փողոցները թախծոտ տխրությամբ էին լցված: Մի պահ անց Պետերը խոսեց: Նա նկարագրեց մարդկանց, որոնք ապրում էին շարքերով կառուցված փոքրիկ տներում, նրանց միապաղաղ կյանքը, խղճուկ հաճույքները, հույսերը:
Երևակայության ուժը զարմանալի էր: Մեծ վիպասան կարող էր լինել: Այնուհետև հասանք քաղաքի ծայրամասում գտնվող գործարանների թաղամասը: Ուղեկիցս լուռ էր, իսկ ես խորհում էի: Մտածում էի այն ամենի մասին, ինչ պիտի լիներ հաջորդ օրը. Նյու-Յորք ժամանելու, Ջեկի մասին, որն այս հուզիչ գիշերից հետո մի քիչ ծիծաղելի կթվար: Հանկարծ ասացի.
-Պետեր, կանգ առեք: Նա արգելակեց հարցնելով.
-Ի՞նչ է պատահել: Լավ չե՞ք զգում: Գամ միգուցե ինչ-որ բա՞ն եք մոռացել իմ տանը:

-Ոչ, ես այլևս չեմ ուզում Նյու-Յորք մեկնել: Չեմ ցանկանում կրկին ամուսնանալ:
-Ի՞նչ:
-Ես մտածել եմ: Դուք աչքերս բացեցիք: Ասացիք, որ կյանքում կան պահեր, երբ ամեն ինչ մեկընդմիշտ որոշվում է: Ահա դրանցից մեկը: Իմ որոշումը վերջնական է: Չեմ ամուսնանա Ջեկ Պարկերի հետ:
-Ինձ համար դա սարսափելի պատասխանատվություն է: Կարծում եմ՝ ճիշտ խորհուրդ եմ տվել Ձեզ: Սակայն կարող եմ և սխալվել:
-Դուք չեք կարող սխալվել: Իսկ ես հատկապես: Այժմ ամենն այնքան պարզ է, խենթություն եմ անելու: Ոչ, ես չեմ մեկնի:
-Փառք Աստծո, դուք փրկված եք: Դուք կործանելու էիք Ձեր կյանքը: Բայց չե՞ք վախենում Փարիզ վերադառնալուց և բացատրություններ տալուց:
-Ինչու՞: Ծնողներս և ընկերներս ուրախ չէին մեկնելուս համար: Նրանց համար այս ամուսնությունը անմիտ արարք էր, և նրանք երջանիկ կլինեն վերադարձիս համար:
-Իսկ Պրն Պարկե՞րը:

-Ջեկի տրտմությունը կանցնի մի քանի օրից կամ մի քանի ժամից:Նրա ինքնասիրությունը վիրավորված կլինի, սակայն ինքն իրեն կսփոփի՝ ասելով որ նման քմահաճ կնոջ հետ անախորժություններն անխուսափելի էին, և կուրախանա, որ բաժանումը տեղի ունեցավ մինչ ամուսնությունը և ոչ թե դրանից հետո: Միայն թե հարկավոր է նրան շտապ հեռագիր ուղարկել, որպեսզի վաղն իզուր տեղը չգնա ինձ դիմավորելու:
Պետերը միացրեց շարժիչը:

-Ի՞նչ ենք անում հիմա,- ասաց նա:

-Շարունակում ենք դեպի օդակայան: Ձեր ինքնաթիռը Ձեզ է սպասում: Իսկ ես կմեկնեմ Ֆրանսիա: Մեր երազն ավարտված է:

-Գեղեցիկ երազ էր,- ասաց նա:

-Իրական էր:

Օդակայան հասնելով՝ ես գնացի հեռագրային բաժին և գրեցի Ջեկին. « Եզրակացրի, որ ամուսնությունն անիմաստ է: Ցավում եմ, քանի որ սիրում եմ, սակայն չեմ կարող օտար երկրում ապրել: Նախընտրեցի ազնվությունը: Ուղարկում եմ տոմսը՝ գումարի փոխհատուցման համար: Համբուրում եմ՝ Մարսել»: Վերընթերցեցի և «օտար երկրում» ապրելը փոխարինեցի «օտարի պես ապրելով»: Այդպես էլ էր պարզ: Մինչ կուղարկեի հեռագիրը, Պետերը հետաքրքրվում էր իր չվերթով: Երբ վերադարձավ, ասաց.

-Ամեն ինչ լավ է կամ ավելի ճիշտ շատ վատ է: Շարժիչը վերանորոգել են. կմեկնեմ քսան րոպեից: Դուք պետք է սպասեք մինչ ժամը յոթը: Ինձ հաճելի չէ Ձեզ միայնակ թողնել: Ուզու՞մ եք Ձեզ համար մի գիրք գնեմ:
-Ոչ,-ասացի ես: Առանց այդ էլ մտածելու բաներ ունեմ:
-Վստա՞հ եք, որ չեք զղջալու: Դեռ ժամանակ ունեք, սակայն հենց հեռագիրն ուղարկեք, շատ ուշ կլինի մտափոխվելու համար: Առանց պատասխանելու հեռագիրը մեկնեցի աշխատակցին:

– Շտա՞պ ուղարկել – հարցրեց նա:

– Այո, – այնուհետև թևանցուկ արեցի Պետերին,- սիրելի Պետեր, ինձ այնպես է թվում, որ հին ընկերոջ եմ ճանապարհում:

Ի վիճակի չեմ կրկնել այն ամենը, ինչ նա ասաց մնացած րոպեների ընթացքում: Նա ինձ կայնքի դասեր տվեց: Դուք ինձ երբեմն ասել եք, որ տղամարդու հատկանիշներ ունեմ, որ հավատարիմ ընկերուհի եմ և չեմ ստում: Այս բոլոր դրական հատկանիշների համար, եթե դա այդպես է, Պետերին եմ պարտական: Վերջապես բարձրախոսը հայտարարեց.
«Նյու-Յորք մեկնող ուղևորները պատրաստվեն 632 թռիչքին»: Պետերին ուղեկցեցի մինչև դռնակը, կանգնեցի ոտքերիս ծայրերին և համբուրեցի նրան: Այլևս նրան երբեք չտեսա:
-Դուք նրան այլևս չե՞ք տեսել: Ինչու՞, նրան հասցե չե՞ք տվել:
-Տվել եմ, սակայն նա ինձ երբեք չի գրել: Կարծում եմ՝ նրան դուր էր գալիս այդպես անցնել մարդկանց կյանքի միջով, ուղղություն ցույց տալ ու անհետանալ:

-Իսկ Դուք Լոնդոն մեկնելիս չե՞ք փորձել նրան գտնել:
-Բայց ինչու՞: Նա ինձ տվել էր, ինչպես ինքն էի ասում, ամենալավն, ինչ ուներ: Մենք այլևս չէինք ունենա այդ գիշերվա անկրկնելի մթնոլորտը: Ոչ, այսպես լավ է: Պետք չէ փորձել վերապրել շատ կատարյալ պահեր: Ասացեք, իրավացի չէ՞ի, ասելով, որ ապրել եմ կյանքիս ամենատարօրինակ արկածը. մի մարդ, ով փոխեց ճակատագիրս, նա, ով ինձ ստիպեց ապրել Ֆրանսիայում և ոչ թե ԱՄՆ ում, մի անծանոթ անգլիացի էր, որին պատահմամբ հանդիպել էի օդակայանում: Նա ինձ վրա թողեց ամենախոր ազդեցությունը: Համաձա՞յն եք, որ հրաշք է:
-Այո, այս ամենը նման է մի հին պատմության, երբ ծպտյալ աստվածությունը մուրացիկի կամ օտարականի տեսք է ստանում՝ սովորական մահկանացուների հետ շփվելու համար: Իրականում, Մարսել, անծանոթը Ձեզ այնքան էլ չէր վերափոխել, քանի որ Դուք վերջ ի վերջո ամուսնացել եք Ռենոյի հետ, որն այն նույն մարդն է, ինչ որ Ջեկը. միայն անունն է տարբեր: Նա մի պահ խորասուզվեց մտքերի մեջ.
-Անշուշտ մարդու էությունը չես փոխի, այլ կարող ես միայն աննշան փոփոխությունների ենթարկել:

Ֆրանսերենից թարգմանությունը՝ Էվրիկա Երիցյանի